ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«1» 12 2025թ. Հր.3507-Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության նախարարներին և կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին» N 835-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 746-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 28-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) աշխատանքները համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության լրատվության և հանրային դիվանագիտության վարչության պետի պաշտոնակատար Հակոբ Սարգսյանին:

2. Խորհրդի աշխատանքների պատասխանատու նշանակել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության լրատվության և հանրային դիվանագիտության վարչության տեղեկատվության և թվային

դիվանագիտության բաժնի վարիչի պարտականությունները կատարող Շիրազ Հովակիմյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ՝ ՏԵՂԱԿԱԼ,
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Մ. ՍԱՖԱՐՅԱՆ